

թուի ոչ ըստ Մալեան օրինաց, (որպէս կարծեն ոմանք), դասերաց Ռուբինի անկանել պայազատութեանն, եւ զրկել գնոսա Լեւոնի. թէպէտ եւ ոչ է ժխտելի, զի թէ գոյին եւս թեկնածուք կամ ակնկալութիւնք արթոռոյն, ընդ բոլորն եւ աննկուն հակառակորդի դիմահարեալք՝ խորտակեալք լինէին: Յայսմ մասին յոյժ եւ առաւելագանց իսկ վրէժխնդիր եւ կասկածոտ երեւի Լեւոն, որպէս եւ յետոյ եղեալ դէպք ինչ ցուցցեն, առ 'ի տապալել եւ խլել զամենայն խութ եւ խէթ աւագասիրութեան իւրոյ եւ նպատակի՝ հասանելոյ 'ի կատար արքունական փառաց միապետական իշխողութեամբ. արդարեւ ոչ բռնաւորաբար, այլ ըստ աւատական օրինաց՝ խնամակալութեամբ եւ դիրեւելով ընդ ձեռամբ անկելոցն եւ չիճ անուանեալ իշխանաց. բայց անողոք եւ աններող առ ամենայն գլուխ՝ որ ոչ առ գլուխ իւր խոնարհիցի, 'ի սահմանս ընդարձակ եւ ընդարձակելի տէրութեան իւրոյ:

Զայսպիսի բարուց եւ զօրութեան նորա փոքր 'ի շատե ունելով ծանօթութիւն Պարոնայց երկրին, անհակառակ նուաճեցան ընդ ձեռամբ նորին, որպէս երբեմն եղբօրն. եւ ինքն Լեւոն ըստ նմին օրինակի շնորհակալու եւ զուարթ դէմս եցոյց. որպէս զի հաստատեցան եւ միտք այնոցիկ՝ որոց երբեմն քսութեամբ խոտորեցուցեալ էր 'ի նմանէ գսիրտ Ռուբինի: Անյիշաչար եղեւ նոցա Լեւոն. «եւ ոչ ինչ պատճառի եղեւ վրէժխնդիր ումեք», ասէ պատմիչն. եւ յաւելու՝ վասն բարուցն, եթէ «էր սա այր իմաստուն եւ հանճարեղ. *ձիավարժ հմուտ*, եւ 'ի զինուորութիւնս քաջասիրտ, եւ արիագոյն յամենայն գործ բարութեան՝ 'ի մարդկայինսն եւ յաստուածայինսն, արագ եւ զուարթերես»: Կշռադատ նկարագիր, ճշմարտեալ 'ի Լեւոն յամենայն գործս իւր. հանճար սուր մինչեւ 'ի յետին խորագիտութիւն՝ որ է խորամանկութիւն. պնդասիրտ քաջութիւն, բազում անգամ փորձեալ՝ մինչեւ յանձեռնհասից յանդգնութիւն. արագութիւն անվրէպ, որով միայն յաջողեաց

